

ճոյական գիտութիւն մ' է: որ կը գրգռէ երեւակայութիւնը շատ մ' անյուծելի խնդիրներ պարունակելուն համար: ուստի եւ միտքըն եւս կամայ ակամայ կը մատնուի ենթադրութեան հրապուրանացը՝ մարդկային հետաքրքրութիւնը յագեցնելու անհրաժեշտ պէտքէն հարկադրեալ:

Յառաջիկայ յօդուածով եւս պիտի խօսիմք գիտաւորաց եւ նոցա վարսին քնադատական կազմութեան բաղադրութեանը մասին եղած կարծեաց եւ գննութեանց վերայ:

(Շ-բ-ն-է-է) :

ՆԻԿ. Մ. ԹԻԼԼՊԷՆՏՃԵԱՆՅ:

Հետագայ յօդուածի հրատարակութիւնը թախանձանօք խընդրուած է: եւ մեք մի քանի բարեփոխութիւնք անելով անձնականի նկատմամբ՝ թոյլ կտամք անկողմնակալութեամբ՝ յարգելով մանաւանդ պատմական մի քանի պարբերութիւնքը՝ որք հետաքրքրական եւ կարեւոր են:

ԴԱՏԱՔՆՈՒԹԻՒՆ.

1879 ամի համար 113 « Մշակ » օրագրի մէջ հրատարակուած էր Վաղարշապատից գրուած մէկ նամակ, և նոյն ամի Մէլ-Հոլ-ն-է 65 համարում տպուած էր մէկ յօդուած « Յարութիւն Շահագիղեանց » ստորագրութեամբ, որով ջրելով վերոյգրեալ նամակի մէջ՝ պարունակուածները, յարձակուումէր Ս. Էջմիածնի կարգադրութիւնների վերայ և ապա երկարօրէն խօսեւմէր մէկ մատանիքի համար, որ գիտութեամբ և խորհրդով սինօգականաց, Ս. Էջմիածնի գանձարանից հանուած և պարգևուած էր Վահագիառ Վաթուղիկոսին երկար ժամանակ հաւատարմութեամբ ծառայող մէկ սպասաւորին:

« Մէլ-ն-է » յիշեալ յօդուածագիրն յառաջ բերելով զանազան անհիմն և մտացածին անցքեր և օրինակներ հանգուցեալ կաթուղիկոսների մասին, հետեւաբար աւելացրել էր թէ « եթէ նամակագիրն կասկածուէ մեր ասածների ճշմարտութեան վերայ, կարող է հարցնել կենդանի վկաներին, որոնց թիւը շատ է գեո. ևս »: Ես ևս մինչև ցայսօր և ընդ երկար սպասեցի, որպէս զի ինքն, նամակագիրն, պատասխանէր նրան, բայց տեսնելով, որ նա թերեւ կամ չունէր ի ձեռին անհրաժեշտ փաստեր, կամ տեղեակ չէր էն անցքերին, զորս յօդուածագիրն յառաջ է բերում, և կամ թէ իրանից անկախ պատճառներից ստիպեալ լոնց, իսկ ես զօլով յօդուածագրի ասած ժամանակակիցներից և վկա-

ներից մէկն, առ ի կատարել նրա սրտի փափագն, հրատարակում եմ այս յօդուածում, ոչ թէ իմ լսածներն, այլ թէ իմ վերահասու և անկատես եղածները, անմիջապէս հիմնուելով գրաւոր ապացուցութիւնների վերայ նշոյնպէս, որպէս զի ազգային պատմութիւնը չլինի թէ հաւատալով յօդուածագրի կիրք յագեցնող ասածներին, ի շարս այլոց ընդունի և նորա պատմածներն որպէս ճշմարիտ անցք:

Բայց նախ իմ գործի էութեան վրայ խօսելու, հարկաւոր — ամենահարկաւոր եմ համարում բարեմիտ և մտածող ընթերցողներին ծանօթացնել Պ. Յարութիւն Շահաղիղեանցի ո՛վ լինելն, թէ նա ինչից էր արդեօք ստիպուած, որ ուրիշի գրչով (ըստ որում ինքն անկարող է), բայց իւր ստորագրութեամբ հանդէս դուրս գալ գրականութեան ասպարիզում:

Նա հանգուցեալ բարեյիշատակ Ներսէս Ե. Վաթուղիկոսի եղբօր Վարպետի որդին է: Ըստ որում «Մշակի» նամակում յիշուած էր միւս հանգուցեալ կաթուղիկոսների անունները, ի թիւս որոց և Ներսէսին, իրր թէ նոքա պարգեւած են իւրեանց ազգականներին և սպասաւորներին աթոռապատկան իրեր, վասնորոյ և Պ. Շահաղիղեանցն, նախ առ ի պաշտպանել զինքն, զիւր եղբայրն և զիւր հայրը, որոնք իրր թէ ո՛չինչ չեն ստացել Ս. Աթոռին պատկանեալ կայքից կամ գանձարանից, սկսումէ պատմել առանց ո՛ր և իցէ գրաւոր փաստերի՝ ի՛նչ ի՛նչ անցքեր խեղաթիւրելով և սեթեւեթելով, որոնք վերաբերումն Եփրեմ, Յովհաննէս, իւր հօրեղբայրը Ներսէս և Մատթէոս կաթուղիկոսների անձնաւորութիւններին: Երկրորդ՝ Յարութիւն ասպարը առ ի վրէժխնդիր լինել, արատաւորել է սրբազնացեալ անձնաւորութեան համբաւն և կառավարչութիւնն, որն խոչընդոտն եղաւ Շահաղիղեանց գերդաստանին ապօրինաւոր միջոցներով գրաւել, շորթել և իւրացուցանել հանգուցեալ Ներսիսի անուամբ Ս. Էջմիածնի սեպհական կալուածներէն Թիֆլիսում քարուկրով շինուած մէկ հոյակապ տուն, նշոյնպէս կորզել, խլել և հանել Ս. Էջմիածնի գանձարանից էն թանկագին անգամանգներով յեռուած շքանշանները, զորս Ռուսաց բարեյիշատակ կայսերներն պարգեւած էին Ներսիսին: Երրորդ՝ սա այն սրտացաւ և ազգի օգտի համար մտածող Շահաղիղեանց Յարութիւնն է, որ երկար միջոց Ռուսաց դատարաններում գանգատելով, առաջին և երկրորդ դատարանների վճռագիրներն ստացաւ, որպէն թէ իր պահանջմունքն օրինաւոր են: Վասնորոյ երկիցս թէ երիցս այլ և այլ միջոցներ ձեռք առաւ որ Ս. Էջմիածնի գանձարանից յիշեալ շքանշանները ևլն. հանեն ուժով և յանձնեն նրան, Յարութիւնին, և կամ աճուրդով վաճառեն և զրամն վճարեն իրան: Բայց . . . բայց Աւհափառ Վաթուղիկոսն խոչընդոտն եղաւ, և նոր ի նորոյ դատն ձգեց Բարձրագոյն դատարանի, որ ջրեց Շահաղիղեանների ապօրինաւոր պահանջմունքն, անշարժ կայքերի և այլոց համար, և վիճելի մնացին շարժականները: Թէև այս առթիւ ոչ սակաւ ծախք պատճառեց Ս. Էջմիածնին:

Այստեղ աւելորդ է փաստեր առաջ բերել, թէ Հայոց կուսակրօն եկեղեցականներն, ինչպէս և կաթողիկոսներն, չեն կարող ունենալ և չունին իրանց ժառանգներ ևլն. որի մասին նոյն իսկ Պ. Յարութիւնի հօրեղբայր բարեյիշատակ Ներսէսն երկար ժամանակ պաշտօնական թղթակցութիւններ շարունակելով Ռուսաց կառավարութեան հետ, թէ և խնդիրը կիսատ մնաց, և ներկայ Աեհ. Հայրապետն յաջողեցաւ այս խնդրոյ վերաբերութեամբ Պալատէնի այլում եղած յօդուածները փոխել տալ և Էջմիածինը և Հայոց եկեղեցին մի փորձանքէ ազատել:

Յօդուածագիրն առաջ բերելով զանազան նիւթեր, առարկաներ և անտրամաբան ենթադրութիւններ, որոնք միմեանց հետ ամենեւին կապակցութիւններ չունին, և ագռաւի պէս այստեղից այնտեղ թռչոտկելով, ասումէ, « Սիմէօն, Դաւիթ և Դանիէլ կաթողիկոսների օրօք այդ (Էջմիածնի) գանձերի մէկ մասը իբրեւ կաշառք անցաւ զանազան խաների և փաշաների ձեռքը . . . » ևլն. ևլն. թէ և էս պարբերութիւնը ո՛չ թէ մութն է, այլ և իրաւ, Յարութիւնի նպատակին չէ վերաբերում, այսու ամենայնիւ պարզեմք, եթէ յօդուածագիրն տեղեակ լինէր ազգային պատմութեան, ինքեան չէր ներելի որ Սիմէօնի անունը խառնէր այլոց անունն հետ, քանզի էն վերջին երկու դարում Սիմէօնի նման աշխատասէր և մեծագործ և արդիւնաւոր կաթողիկոս մէք հազիւ ենք ունեցել, նրա կանգնացրած տպարանը, թղթի գործարանը, Ա. Էջմիածնի միաբանութեան խուցերի առաստաղները բարձրացնելն և Ս. Էջմիածնի Տաճարի վերանորոգելն, ակն յայտնի քարոզումն նրա շքեղ անունը, և նրա ժամանակն չեն եղած ասպատակութիւններ, յափըշտակութիւններ և հալածանքներ, որոնց մասին նա կաշառքներ գործ ածէր: Իսկ նրա յաջորդ Աուկասի ժամանակն (որի անունը Պ. յօդուածագիրն մոռացել է յիշել, կամ անտեղեակ գոլով ազգային պատմութեան չէ առաջ բերած), Պարսից անիշխանութեան ժամանակն արդարեւ մեծ հալածանքներ կրելուն համար, Աթոռն ոչ թէ կաշառք, այլ ընծայի անունով երբեմն Ռուսաստանից, և երբեմն Տաճկաստանից ստացած ճոթեղեններ և իրեղէնները մատուցած է Շահութեան հետամուտ եղողներին և կամ նրանց տեղակալներին: Էս ամենից յետոյ նա, Աուկասն, մեռնելիս, դարձեալ հարիւր հազար Պարսից թուաման ոսկի գրամ է թողած Աթոռոյն, Սիմէօնի և Աուկասի համար ոչ թէ աւանդութեամբ, այլ և զրաւոր ապացուցութիւն իսկ չկայ, որ նրանք իրանց ազգականներին ո՛ր և իցէ դամար դանձարանից հանած պարգեւած լինէին:

Աուկասին յաջորդումէ երկայնաբազուկ Արղութեան (որի անունը դարձեալ յօդուածագիրն չէ յիշում) Յովսէփին, որ ժամանելով Խիֆլիս, իջևանումէ իր եղբօր տանը, և առանց օժուելոյ անդէն վախճանւումէ, իսկ նորա եղբայրն ու նորա սպասաւոր Գրիգոր Աարդապետն հանդուցելոյ կայքի մեծ մասն պարտկումն:

Նրան յաջորդում են և միմեանց հակառակում Դաւիթ և Դանիէլ կաթուղիկոսները, Աւերջինը Ս. Յովհաննէս (Իւշ քիլիսա) վանքում օծուելէն յետոյ, Տաճկաստան դեգերելով, ապա Դաւթի կարգադրութեամբ Ս. Էջմիածին է բերվում և բանտարկվում. և յետոյ Ռուսաց և Պարսից պատերազմի ժամանակն տանվումէ որպէս բանտարկեալ Երեւանի բերդը (1804), և Ռուսները վերադառնալիս, Շահի հրամանաւ արսորում են նրան Թարվէզ և անտի Մարաղայ, ուստից 1807 ամին ազատվում, վերադառնում է Ս. Էջմիածին, և բազմումէ կաթուղիկոսական գահի վերայ, բայց 1808 ամին որպէս բանտարկեալ վախճանվումէ Երեւանի բերդի մէջ, Դանիէլն դառաւ Ս. Էջմիածինը թշուառ վիճակի մէջ, վանքական օրական հացն և հասոցթն անգամ չէր կարողանում հոգալ, աղբսում էր Թիֆլիսի առաջնորդ Յովհաննէս Եպիսկոպոսին որ՝ իւղ, պանիր, գոմէշ, եղն, ևլն. ևլն. ուղարկէր աթոռայնոց սննդեան համար, Ապաքէն բարի Դանիէլն ի՞նչ ունէր, որ տուել էր կամ ընծայել էր խաներին և փաշաներին, քանզի *) նախ՝ 1804 ամին իշխան (կնեաղ) Յիցիանովի հրամանաւ ժեններալ Տոչկովն, և ապա 1805 նեւ-վետայովը՝ զանազան ոսկեղէն, արծաթեղէն սպասներ, մարգարտեայ թագեր ևլն. ևլն. ժողովել տարել էին Թիֆլիս, թողնելով Ս. Էջմիածնի աւանդատունը և գանձարանը թափուր, և յանձնել էին տէրութեան Թիֆլիսի գանձարանին որպէս աւանդ, ի հարկէ մանրամասն ցուցակով, Իսկ Դաւիթն մինչև այն ժամանակն ո՛չ միայն վերդիշեալ հարուր հազար թումանը, այլ և շատ աթոռապատկան իրեղէններ անգամ ընծայելով Պարսից խաներին, Բայազիտի, Աարսի, Էրզրումի և Կ. Պօլսի ինչ ինչ փաշաներին, մի և նոյն ժամանակն հարստացրել էր իր եղբայր Բարսեղին, որ Էնադես գիւղի բնակիչ էր, Դաւիթն վերջնոյս գեղից բերել տալով Երեւան, փողի ուժով նրան փեսայացրել էր երեւելի Մելիք Աբրահամ Մելիք Աղամալեանի դստերն, որպէս զի Մելիքն ինքեան նեցուկ և պաշտպան լինի, Որպէս ականատես եւմ պատմում, Բարսեղն ինչպէս շատ կուսակրօնների պղերդ աղգականներ, իւր կեանքումն ո՛չ մէկ գործով կամ արհեստով չէր պարապած, այլ միշտ Երեւանի մէջ ճոխ, փարթամ, և շոյլ կապրէր և դատարկապորտ կեանք կվարէր, Բարսեղն, որ յետոյ Բարսեղ աղայ էր եղած, էնքան թանկագին ակնեղէններ էր շորթած Աթոռիցն, որ մինչև 1830 թիւն, երբ ես Երեւան էի, նա դարձեալ ժամանակ առ ժամանակ նրանցից կհանէր և կվաճառէր:

Դանիէլից յետոյ կաթուղիկոսացաւ Եփրեմ, որ 1815 թուին հաղիւ կարողացաւ ստէպ ստէպ թղթակցութեամբ վերաստանալ Տուչկովի և

(*) Ո՛վ ոք կուրումէ Ս. Էջմիածնի կայրի Թիֆլիս բերելոյ անցքին լաւ վերահասու լինել, թող շնորհ անէ կարգայ (Փորձ) տնտգրի մէջ 1879 ամի հրատարակուած Երեւանացի Երեմի Ե. Ի. յօդուածն իւր շարունակութեամբ:

Ներսիսեանցի տարած Ս. Էջմիածնի կայքը . . . նախ Յովհաննէս
 և ապա Ներսէս արքեպիսկոպոսների ձեռամբ: Պատմութիւնը մեզ ցոյց
 է տալիս որ, ինչպէս կայքը տանելիս, նոյնպէս վերագործնելիս, Ռու-
 սաց պաշտօնատարներն Հայ հոգեորականների ներկայութեամբ բաղ-
 կացրած են մանրամասն ցուցակ, ուրեմն Պ. Յարութիւնն ո՞ր տեղից
 արդեօք ստեղծեց ասելով թէ « ո՛ւր են գնացել երեք փակեալ արկղներն՝
 զանազան թանկագին ակնեղէններով, մնացած Աուկաս կաթուղիկոսի
 ժամանակից հետէ, և որք Ներսէս և Մատթէոս կաթուղիկոսաց օրօ-
 քը պահպանուեցան Էջմիածնում մինչև նոցա մահուան օրը նոյն դրու-
 թեան մէջ և անկորուստ: » Ահա, ընթերցողներ, լսեցէք « Աւ-իւ-ն-ի-
 ջ Մ-տ-թէ-ո-ս Կ-թ-ու-ղ-ի-կ-ո-ս: » Սա մէկ անոտն, անգլուխ, և անպոչ սուտ
 է, չստեղծ ո՛ւր էին մնացել և ո՞ր տեղից էին բերել, Աւերն տեսանք
 համեմատ Ռուսաց և Հայոց պատմութիւններին թէ, ի՞նչպէս Աթոռա-
 յին կայքը, մինչև սուրբ մասունքներն անգամ, ընկնում են Ռուսաց
 ձեռքը, և ցուցակ է կազմվում ներկայութեամբ Յովհաննէս Գեղարդակրի
 և այլոց Էջմիածնի միաբանների, և յետոյ երեք անգամում դարձեալ
 ներկայութեամբ հոգեորականների յանձնվում են Յովհաննէս և Ներ-
 սէս եպիսկոպոսներին, Վարելի էր արգեօք, որ Ռուսաց պատմութիւն-
 ներն նոյնպէս և Հայոցն, լուէին էդ երեք արկղների համար, և կամ
 առանց բանալոյ աւանդէին յիշեալ եպիսկոպոսներին, Եթէ այսօր մէկն
 վերկենայ ասէ թէ, քեռի Յարութիւն, ստացողների մէկն եղել է քո հօր-
 եղբայր Ներսէսն, որևէ երեք արկղներն թողել էր ձեր տանը կամ
 քո մօտ, իսկ դուք ուրացաք ու պարտկեցիք, և այժմ Մատթէոսի անու-
 նը գիտութեամբ առաջ ես բերում քո յօգուածում, որպէս զի նրանց
 հետքն կորցնես: Ասա՛ խնդրեմ, ո՞վ կարող է էնպէս ասողի բերանը ցն-
 խել, Արդ այժմ հարցնումեմ, ի՞նչ փաստի վրայ հիմնուելով էդպէս
 անցք ես հրատարակում, Վարելի է Ներսէսիցն կամ Մատթէոսիցն, և
 կամ Սիմէօնիցն գրաւոր փաստեր ունիս, հրատարակէ, որ մեք ես
 միամտանաք, Հատ լաւ կանես, որ սրան պատասխանես թէ « հօրս
 կամ եղբօրս, և կամ հօրաբուերս ձեռագրովն եմ ասում. և կամ թէ
 մօրաքոյրիցս եմ լսած և իմացած », Էսպիսի շլամիտ զրպարտութիւն-
 ներ հնարողներն՝ պատմութեան առջևը բացի . . . ո՛չինչ չեն վաստա-
 կելու:

Եփրեմն մերձ աղգականներ չունէր, որոնց աթոռային դանձարանից
 կամ կայքից բաներ պարգեւէր, ընդհակառակն նա Հնդկաստանի նուի-
 րակութիւնից մեծ հարստութեամբ վերագործնալով Ս. Էջմիածին, սկսեց
 Թիֆլիսից գերի բերած Հայերն և Արացիներն ազատել և վերագործնել
 իրանց հայրենիքը. և այնուհետև նշանակուեցաւ նուիրակ Ռուսաստա-
 նի, Իսկ երբ ընտրուեցաւ կաթուղիկոս, վերագործաւ Ս. Էջմիածին,
 իր վերջին ունեցածը չունեցածը գործածեց աթոռային պակասութիւն-
 ները լրացնելու համար և Ալաշկերտից բերած Հայ գերիներն ազատե-

լու *), որի աղագաւ 32 հազար թուման պարտքի ենթարկուեցաւ, վասն որոյ գնաց Թիֆլիս, որ ժողովք անէ, գրամ հաւաքէ և ուղարկէ Աթոռն պարտքից ազատելու:

Ախպար Շահազիզեանցն մէկ ուրիշ մութն, անհասկանալի երեւակայական կաղին էլ է կոտորում, «Եփրեմ կաթուղիկոսի օրով, ասումէ նա, երբ Էջմիածինը ընկաւ Ռուսաց գայիսոնի ներքոյ, այնուհետեւ թէպէտ Էջմիածնի գանձարանը (առանց գանձի գանձարան) ազատուեցաւ ամենատեսակ բռնակալութիւններից, սակայն ենթարկեցաւ ընդանի ահաբեկչութիւնի իշխանութեան . . . և ինչ . . . » Եփրեմից յետոյ երեք կաթուղիկոսներ գահակալեցին, Յովհաննէս, Ներսէս և Մատթէոս, որոնք ըստ ասութեան և վկայութեան նոյն ինքն Շահազիզեանցի, անմեղանշականներ էին, ապաքէն, ամօթ չլինի հարցնելն «այն-հետեւ» և «ընդանի ահաբեկչութիւն» բառերն արդեօք էս երեքին, թէ կուզես ասելը չորսի՞ն էլ են վերաբերում, թէ նոցանից մէկին, Եթէ Յօդուածագիրն ճշմարտախօս է, ինչի՞ վարագործով է հանդէս գուրս գալիս, և չէ յիշում թէ ո՞ր էին անհաւատարիմներն, Այսպէս նրա մութն խօսելն, արդեօք ապացուցութիւն չէ՞ որ անհիմն է Թերեւս նա շուռ գալ ասէ, չէ՞ նրանց բոլորին կամ մէկին ստորագրեալների համար է գրում, այսու ամենայնիւ առ ի չաղարտել կաթուղիկոսների սրբազնացեալ անուններն և համբաւներն, պարտաւոր էր անուններն յիշել, Թէ էսպէս կամ էնպէս, մի և նոյն էր, գողն և գողակիցն ի միում պատժի են, այնու ամենայնիւ էնպէս հասկանալովէ նրա ասածից թէ, չորս կաթուղիկոսներն էլ անհաւատարիմ իշխանութիւններ են եղած, որ քաւ լիցի: Ստախօսներն և զրպարտողները կսիրեն միշտ ինչպէս խլուրդ՝ խուլ, խաւար և խոնաւ տեղերում շրջիլ:

Եփրեմն զեռ ևս կենդանի էր որ Յովհաննէսն կաթուղիկոս օծուեցաւ, որին և ես հանդիսատես էի: Նրա օծուելէն մէկ քանի շաբաթ անցած չանցած, չորս թէ հինգ երեւելի, առաջնակարգ և պաշտօնատէր ծերունի եպիսկոպոսներ մէկզմէկի քամակից վախճանեցան, և նա նրանց պաշտօնները յանձնեց իր կուսակիցներին, որոնց գլխաւորներն էին Պ. Շահազիզեանցի վկայ բերած Մարութեան Յովսէփ, և կաշառակեր Արարատեան Ստեփան վարդապետներն, և որոնք անմիջապէս ձեռնադրուեցան եպիսկոպոս: Ըստ որում Յովհաննէս սկսեց այնուհետեւ ինքն իշխանաբար տնօրինել աթոռային գործերը, և՞ մանաւանդ հալածել Ներսիսի կողմնակիցները, վասնորոյ և ամենայն ուրեք ազգի մէջ քրքրեմունքներ սաստկացան և բողոքներ ծագեցան, որոնց ապացուցութիւններն են ծերունի Արմէօն արքեպիսկոպոսի և Ղրիմեցի Յովհաննէս եպիսկոպոսի բողոքագիրներն ուղղուած Ռուսաց կայսեր և ժանգարմ-

(*) Ճանապարհորդութիւն Մեծորդի Թաղիթեանցի. Կալկաթա. 1847, երես 29:

ների գլխաւոր Բեկենդորթի անուամբ, Արդարեւ էս մանրամասն և երկարօրէն նկարագրուած ժամանակի անցքերի աղերսագիրներն, արժանի են հետաքրքրութեան պատմաբանի, և որոնք վաւերացնում են վերեւ և յետագայ իմ ասածների մեծ մասն, Ահա էս բողոքագիրների վերայ բաղկացաւ Պալատի ասված կարգադրութիւնն:

Հաճաղիղեանց պարոնը տեսէք ինչ ոճով է խօսում, որպէս զի պաշտպանելով Յովհաննէս կաթողիկոսի աղագականները, զինքն ևս պաշտպանէ: «Սակայն, ասումէ նա, յայտնի է Քալ» (արդեօք ո՞վ է էս Քալ, այն ինչ նա Յովհաննիսի ժամանակն Քիչն և Ներսիսի առաջնորդարանում ուսում էր առնում, և նրա, Յովհաննիսի վերջին օրերումն եկած էր Թիֆլիս, և աչքով ևս նրան չէ տեսած և նրա օրօք Էջմիածին ևս չէ եկած), Սակայն Քալ յայտնի է? այդպէս չէ եղել իրօք, ըստ որում Յովհաննէս կաթողիկոսն ո՛չինչ չէ տուել Էջմիածնայ դանձարանից և: Յարութիւնեաին (որպէս թէ ինքն ներկայ էր), այլ միայն իւր քեռորդոյն ընծայել է (ի՞նչ վարպետութեամբ է խօսում, այսու ամենայնիւ հարցնենք, որի՞ն արդեօք, Գալուստի՞ն, Մելքումի՞ն, Թոմասի՞ն թէ Գրիգորի՞ն) չնչին իրեր, իր անձնական սեպհականութիւնից, ինչպէս հրապարակաւ պատմեցին Թիֆլիսի առաջնորդարանում Յովսէփ և Ստեփան եպիսկոպոսներն: Ի՞նչ զարմանալի՝ մի և նոյն ժամանակն անհերքելի ապացուցութիւն, Առած է թէ՛ «գեղի քեղիսուղի (այս ինքն բէլի, Բէլի)՝ վկայն իր գգիրն է, աղուեսի վկայն՝ իր պոչը»: Յօդուածագիրն սորանից առաջ 35 տարի, նոյն իսկ Յովհաննիսի կուսակիցների բերանից լսածն, էն էլ ո՛ւր, Թիֆլիսի առաջնորդարանում, առաջ է բերում, և կամենում էլ է, այն էլ իր վկայելովն, ընթերցողներին հաւատացնել, Խնամի Յարութիւն, էսպիսի առարկաների վերայ դատողութիւն անելն մաժոտն ու թան չէ, և ամեն մարդի բան չէ՝ ականջդ բաց արա՛, լսէ՛ գրաւոր ապացուցութիւններ են հարկաւոր, և ո՛չ թէ նրա դատարկ զրոյցներն, Այս տեղ փոքր ինչ կանգ առնենք:

Յովհաննէս կաթողիկոսն երկու քուեր որդիներ ունէր ջոկ ջոկ մօրից, Գալուստ և Գրիգոր անուն, և երկու էլ մէկ հօրից եւ մէկ մօրից՝ Մելքում և Թոմաս անուն, Գալուստն երեխայութիւնից ծառայած էր Յովհաննիսին, և մինչև իւր մահը նրանից կըստանար իր և իր ընտանեաց ապրուստն Գրիգորն հաղիւ թէ 21—22 ամեայ լինէր, գեղեցկատեսիլ, մեղմ և ամօք ընթերցամբ, հիւրասէր ոմն էր, և երբ նրա քեռին կաթողիկոսացաւ, նա եկաւ Թիֆլիս, ամուսնացաւ, և ընտանիքովն վերադարձաւ Վաղարշապատ: Եւ 1834 թէ 1835 թ. Պարսկաստանից վերադառնալիս՝ մէկ քանի Թիֆլիսեցիների հետ գնացի Էջմիածին, հանդիսատես լինել եպիսկոպոսների ձեռնադրութեան, և իջանք Վաղարապատում: Գրիգորն լսելով իմ գնալն, եկաւ ուժով ինձ տարաւ իր տունը, որովհետեւ նրա աներոջ տունը իմ երեք եղբայրն սուրբ մեռոն էր տարել, նրա տունը, տան կայքը, կարասիքը և փռուածքը համեմատելով էն

Ժամանակի նրա երկրացիների կացութեանը, առաջին ճոխ և փարթամն էր, որոնցից վարդապետի հոտ էր բուրում։ Մէկ օր երբ նրա զորանչի հետ մենակ մնացինք, նա բացեց իր արկղներն, ցոյց տուեց ինձ կաթուղիկոսից ստացած իր հոգեպահութեանները, նրանց մէջ աչքի ընկնողներն էին ամենափառաւոր երկու սամուրից և ջիլզաւից քուրքեր, երեք մատանիք, կարմիր, կապուտ եաղուծի և կանաչ զմրուխտի մէկ քանի մեծ և փոքր հատիկներից սաթէ համրիչներ, և երկու վղանոցներ բաւական խոշոր մարգարիտներից շարած։ Պարզամիտ կիւնը շատ անցքեր պատմելով և ապսպրելով, որ Թիֆլիս հասնելիս պատմեմ նրա մօրն և քւորն, աւելացնելով թէ «ինչ որ հիմի տեսար. . . ինձ է պարգեւել, իսկ աղջկանս հինգ եգքան իրեղեններ է շնորհել, և Գրիգորն էլ իր արկղումը աւելի լաւ լաւ ակնեղեններ, արծաթեղեններ և ոսկեղեններ ունի, պահումէ որ երբ աղջկանս Աստուծով զաւակ ծնի, նրան ընծայէ, ինչպէս և . . . էլ հրամայել է» :

Մեկքումն և Թումասը Վարբի գեղում հասարակ գեղացիներ են լինում մինչև Յովհաննիսի լուսարարութեան պաշտօն ստանալը։ Վերջինս իր վարդապետութեան և եպիսկոպոսութեան ժամանակն երբեմն երբեմն նրանց ծածկաբար կամ յայտնաբար օրնած է լինում, բայց երբ Ս. Էջմիածնի լուսարարութեան պաշտօնն է ստանում, այնուհետև նրանց գաղթեցնում է Նրեան, մէկ տուն, մէկ այգի և մէկ խանութ է դնում, պարգեւում նրանց, սրանց արգիւնքովն նրանք ապրումեն։ Բայց երբ Յովհաննէսը կաթուղիկոսացաւ, այնուհետև Մեկքումն և Թումասն բաժանուեցան, և եղան Մեկքում աղայ և Թումաս աղայ, սկսեցին առանձին առանձին հոյակապ տներ, այգիներ և խանութներ գնել, լաւ ձիան, ջորիներ և աւանակներ պահել, լաւ կահաքնէին, լաւ կուտէին, լաւ կիսէին, լաւ կապրէին, և իրանց ընտանիքով ոչ մէկ ուխտատեղից չէին պակասիլ։ Իմ Նրեան եղած ժամանակն էս երկու եղբայրները շարունակ ոսկերիչների, ակնաւաճառների և սեղանաւորների խանութներում իրանց փառահեղ հագուստներով կրաղմէին, որպէս զի թանկագին քարեղէն գնողներ գտնէին։ Թումասն ձեռնաբաց, բարեսիրտ, զուարճախօս և հիւրասէր ոք էր, որպէս կատակ հրապարակաւ յաճախ կըրկրկներ թէ «պարոններ, ինչի՞ են ինձ բամբասում և վրէս խօսում, էս հացն, էս բարութիւնը որ վայելում ենք, ճշմարիտ է որ աղգային է, է՛հ դուք վկայ կացէք որ, ես էլ աղգի հետ եմ ուտում և վայելում»։ Իսկ Մեկքում լուռ—մունջ, խորամիտ և անհիւրասէր ոմն էր, և միշտ կաշխատէր իր գործերը ծածկաբար կատարել։ Սորա միակ որդի Թեումն, իր հօրից մէկ պատուական մեծ կանաչ զմրուխտէ եպիսկոպոսական մատանի էր զողացել և ծախել ճիպիլնեց Զոհրաբին 40 ուրբլիով, երբ հայրն իմացաւ, եկաւ Զոհրաբի քովը շատ աղաչեց, միջնորդներ ձգեց, ի վերջոյ 40 ուրբլին և 20 էլ վաստակ տուեց նրան և մատանին վերաստացաւ, որն ասումէին, 150 ուրբլի արժէր։ Բայց

աւաղելով ասեմ՝ որ, վերոյիշեալ չորս անձնաւորութիւններէց այժմ մէկ արական և մէկ իգական սերունդներ են մնացած, նրանք էլ անդաւազներ են, իսկ միւսները բոլորեքեան անդաւակ մեռան գնացին: Տեսէք, ի՞նչ ավերեցութիւն ունի ազգային աւանդութիւններն թէ, վարդապետի փողեր ուտողի ազգատոհմն կոչընչանայ, վարդապետի փողեր ուտողների որդիքն կը գժուին, և այլն և այլն:

Յովհաննէս կաթուղիկոսին յաջորդեց անմոռանալին՝ Ներսէս, յօդուածագրի հօրեղբայրն: Սա 1814 թուին Վարաստանի և այլոց վիճակաւորութեան պաշտօնով գալիս է Թիֆլիս, և չորս—հինգ տարի անցած չանցած նրա եղբայր Վարապետն իր ընտանիքով Աշտարակ գիւղից գաղտնի գաղթում է Թիֆլիս, ի՞նչ նպատակով, թող ընթերցողները գուշակեն, Նա բացի իր եղբորից՝ ոչ ազգական, ոչ ծանօթ և ոչ էլ զրամ է ունենում այն տեղ, վասն որոյ իջեանում է Վանք ասացեալ եկեղեցւոյ գաւթում, հին առաջնորդարանի ներքեւի յարկում: 1821 թուի վերջերում, երբ ես վանքի գաւթում Վարապաղցի Պօղոս վարդապետի մօտ կկարգայի, լաւ մտիս է, որ ծերունի Մինաս եպիսկոպոսն և մեր յօդուածագրի հայրը Վարապետն, իր գեղացւոյ կոպիտ հագուստով, ոչխարի մօրթից ահագին $\frac{1}{2}$ - $\frac{1}{2}$ -ով և սպիտակ լաւաներով գաւթի մեծ դրանը միշտ կնստէին և զրոյց կտային, որովհետեւ վերջինս ոչ արհեստ գիտէր, և ոչ էլ զրամ ունէր, որ մէկ գործով զբաղուէր, և յետոյ երբ $\frac{1}{2}$ - $\frac{1}{2}$ գեղի տէր դառաւ, այնուհետեւ նրա հագուստներն փոքր առ փոքր փոխուեցան, նմանեցան քաղաքացւոյ հագուստի, և ի պատիւ եղբօրն, եղաւ Վարապետ աղայ, Բաւական է, էսպէս էլ պէտք էր լինէր նրա զրութիւն, որովհետեւ Պարսից բռնակալ տէրութիւնից փախածն, ի՞նչ կարողէր հետը բերել, թէ և բերած ևս լինէր, նրա համար աւելորդ կը լինէր, քանզի նա և նրա ընտանիքը կերակրվում էին առաջնորդական խոհարանից, և բնակարանն էլ վանքական էր՝ այսինքն անվարձ, Աշտարակ թողած կալուածներից նա ոչինչ արգիւնք չէր ստանում, որովհետեւ Երեւանի Սերդարի հրամանով Բոյաղչենց Խաչատուրն իր 200 թուման (600 ռուբլի) մուրհակով ստանալիքի համար տիրապետած էր նրա կալուածները, էն ժամանակն՝ էն կալուածներն ի հարկէ հաղիւ թէ էս գումարի արժենային, քանզի եթէ 1823 թէ 1824 թուերին Ղայիթմագուանց Խոսրով խանը յորդորմամբ Գուլապեանց Ջաքարիա վարդապետի բոլոր (շէշդանգ) Աշտարակ գեղը գնելով երկու հազար Պարսից թումանի (6000 ռուբլի) պարգեւել էր սուրբ Էջմիածնի Աթոռին որպէս յաւիտենական սեփականութիւն, պայմանաւ թէ որքան ժամանակ որ իր եղբայր Պետրոսի գուստրն կենդանի է, վայելէ նրա արգիւնքն, և մեռնելէն յետոյ մնայ Աթոռին, ապաքէն Վարապետի ժառանգական կալուածներն, որոնց մասին յօդուածագիրն մեծ մեծ փրթում է, ի հարկէ էն ժամանակն 200 թուման արժողութիւն չէր ունենալ, Իսկ եթէ Ռուսների Երեւանը տիրապետելէն 25—30 տարի յետոյ, յօդուածագրի ասու-

Թեամբ, Մնացականենց այգին վաճառել է 14 հազար ռուբլիով, երբ և բոլոր Աշտարակն էնքան շէնացել և բազմամարդացել էր, որ ի հարկէ շէշդանկ 400 հազար մանէթից աւելի կարժէր, ինչպէս որ մինչև ցայսօր այն գեղի հողերի գներն հետզհետէ թանգանումն և կթանգանան և այլն և այլն:

Կարապետ աղայն երբ Գուռնուկի տէր եղաւ, գնաց իր ընտանեքով Գուռնուկ, և փոքր ժամանակից յետոյ վերադարձաւ Թիֆլիս, բնակեց ուսումնարանի առաջն շինած քերվէնսարայ ասած շինութեան վերի յարկումն, էն դմբթաւոր ընդարձակ տան մէջ, զոր հանգուցեալ ներսէսն շինեց, որպէս զի նորա և քերվէնսարայի արդիւնքներն հասնեն իր կառուցած ուսումնարանին: Ամօթ չլինի հարցանելն, թէ՞ Յարութիւն . . . , էն տանը դուր կացելէք 25 տարից աւելի, ասա խնդրեմ, նրա վարձն, որ անշուշտ տարին 500 ռուբլի արժէր, ս'ւմն էք վճարել, արգեօք՝ ներսիսեան ուսումնարանի հոգաբարձութեանը թէ Թիֆլիսի կոնսիստորիային, Ա. Էջմիածնի Սինօղի՞ն թէ նոյն իսկ բարեյիշատակ ներսիսին.— եթէ վճարել էք, ի հարկէ ստացականներ կամ ասենք նամակներ կունենաք, չէ՞ կարելի արգեօք մէկ հրապարակական թերթի մէջ անուն, անուն էն ստացականների պատճէններն հրատարակէք, ըստ որում ինչպէս դուք ձեր յօդուածում բացագանչումէք թէ «Ազգն զարթել է իր մահանման քնից, կհետազօտէ», և այժմ նոյն ազգն խնդրումէ որ էդ հաշուին վերահասու լինի և իմանայ թէ արդարեւ է՞նպէս են ինչպէս զրոււմէք: Քա՛ւ լիցի՛, Ազգային առած է, ուրեմն և անխտտի թէ «էշը մատաղ չի լինիլ, բայց թէ նրան ծախես, նրա փողովն ոչխար առնես, մատաղ անես, ընդունելի կլինի»: Եթէ գանձարանից զրամ կամ իրեղէն չհանես, այլ գանձարան մտնելու արդիւնքն ստանաս և ասես թէ՛ պարգևողի անձնական սեփականութիւնն էր, մի՞թէ արդարութիւն է: Էս «ան-ն-իւն «է-է-է-է-է-է-է-է-է» կուսակրօնների բառերը մեր մէջն չկային, բայց հոգևորականների ծոյլ, պղերգ, պորտաբոյծ և դատարկակեաց ազգակա-ններն նոր ստեղծեցին, հիմնուելով Պալաժենեայի մէկ յօդուածի վերայ, զոր ներկայ Աւհ. Հայրապետ փոփոխել տուեց 1868—71 թուականնե-րում:

Այս տեղ խոնարհաբար հրաւիրում եմ անաչառ ընթերցողներին և նոյն իսկ յօդուած շարագրողի առանձին և լուրջ ուշադրութիւնը, ըստ որում վսեմ—ամենափսեմ խնդիրներ են:

Պատուելի Պ. Յարութիւն Շահազիզեանցը զրոււմէ թէ «ներսէս կաթուղիկոսն նոյնպէս (այսինքն որպէս Յովհաննէս և Մատթէոս կաթուղիկոսներն) ոչ ինչ չէ տուած Էջմիածնի գանձարանից մէկին կամ միւսին, և ոչ իրան հաւատարիմ Սամուէլեանցին. . . . այլ՝ իրա եղբօր որդի Յովակիմ Շահազիզեանցին փոքր տուել է Գուռնուկ գիւղն, որ ինքն էր գնել 1821 թուին իշխան Բագրատունեանից, հասուցանելով ի-

բա անձնական սեփականութիւնից 1000 մանէթ արծաթի), այն ևս ինչ
 չէր եղած ի տրիտուր 25 մեծ, անվարձ ծառայութեան, և ինչպէս
 այն փոխարէն, որ ժամանակ առ ժամանակ պարտք էր արել իւր եղբայր
 Վարապետէն, այն է երկու հազար մանէթի չափ ցորենի, գինւոյ և այլ
 պաշարեղինաց գինը, որ ստացել էր Պարսից պատերազմի ժամանակը
 Ռուսաց զօրքին կերակրելոյ համար, և հազար մանէթի չափ Թիֆլիսի
 ուսումնարանի շինութեան համար. այս պարտուց մասին գտնվում է ինձ
 մօտ իսկական նամակն եղբոր Ներսիսի—Վարապետի (այսինքն իւր Թա-
 րութիւնի հօր) գրեալն առ իւր եղբայր Ներսէսն 1829 ամին, որով պա-
 հանջում է այդ պարտքն վճարել. . . . Պահանջողի իսկական նամակն
 ի՞նչ անհրաժեշտ փաստ է. Անշուշտ ոչ մէկ քաջ օրէնսգէտ չի յանդգնիլ
 զայն մերժել. Էս փոքրիկ պարբերութեան մէջ քանի՞ հակասութիւններ
 կան, նրանցից ամենափոքրերն առ այժմ ասենք, Վերսէս ասած «Ներսէսն
 տուել է Պուստուկին փոխ Ծովակիմին», ներքէն կրկնում է «ի փոխարէն
 այն գումարների, որ պարտք էր արել իր եղբայր Վարապետէն», Սրան
 ի՞նչ ասենք որ ամեն դրամի գումար յիշելիս, կպցնում է և չափ բառն,
 եթէ ճշմարիտ են նրանք, ինչի՞ և ե՞րբ են տուած և ո՞րքան և ոչ տարե-
 թիւը ու ամսաթիւներ չէ յիշում, այլ միայն բոլորակ գումարներ է
 գրում, եթէ Ներսէսն 1821 ամին Պուստուկին տալով, իր պարտքերն իր
 եղբորն վճարուած էր համարում, ինչպէս և նրա որդին խոստովան-
 վում է այժմ, ապաքէն 1829 թուին Վարապետն ինչի՞ էր ուզում նրանից,
 եւ Ծովակիմի ծառայութեան 25 տարիի վարձն հաշուելով իւրաքանչի՞ր
 տարի պակաս պակաս 500 մանէթ, կանէ 12500 մանէթ և Վարապետի
 ստանալիքն 3000 մանէթ, գումարն է 15500 մանէթ, ուրեմն էս ամենի
 հաշվումն Ներսէսն տուել է մէկ զեղ 1000 մանէթ արժողութեամբ, Օ՛ն
 անգործ էս ներեմ ինձ հաւատալ, որ Ներսէսն այնքան անխիղճ անձ-
 նաւորութիւն լինէր, Պ. Թարութիւնի գրածից ենթադրվում է որ երկու
 եղբորից մէկն խարդախ և ապօրէն է վարուած, որին ես չեմ հաւա-
 տում, և կամ թէ յօդուածագրի ասածներն, եթէ չասենք սուտ են, այլ
 անհիմն և մտացածին են, Էսպէս թէ էնպէս՝ յօդուածագիր պարոնը
 կամենալով իր համբաւն չաղարտել, մի և նոյն ժամանակն անխնայա-
 րար արատաւորում է ողորմելի Ներսիսի և իր սիրելի հօր համբաւն և
 պատիւն, Էյժմ միւս կետերն ևս բացատրենք:

1821 թուին ոչ Ծովակիմին էր ծառայում Ներսիսին գրագրի պաշտօ-
 նով, ոչ Ռուսաց և Պարսից պատերազմի հոտն կար, և ոչ էլ «ուսումնա-

(1) Կան փաստեր, եւ ցանկացողք կարող են անձամբ երթալ Տիֆլիս Թիմական տա-
 եանը դառնալով պաշտօնական վաւերագրերէն ստուգել թէ՛ տղային եկեղեցւոյ
 սեպականութիւնն եղած Կոճկար գիւղը վաճառելով Ներսէս Եւ կաթողիկոսն, նորա
 փոխարէն ստացած գումարն մի մասովը ծախաւ առած է յիշեալ Պուստուկ գիւղը, զոր
 իւր եղբորն պարգեւել է:

րանի հիմնարկութիւնն էր եղած: Տեսէք ընթերցողներ, Յովակիմի ապագայ ծառայութեան համար առաջ վարձ վճարել, Պարսից ապագայ պատերազմի համար ուտելիք, գինու և այլոց գներն՝ առաջ հատուցանել, և ուսումնարանի ապագայ հիմնարկութեան համար՝ առաջ գրամ փոխ առնել և վճարել, Անհասկանալի և անհաւատալի չեն արգելօք, Այսու ամենայնիւ քննենք այդ երեք խնդիրներն թէ որքան ճշմարիտ են, որքան ճշմարտանման և որքան մտացածին են:

Հանգուցեալ Յովակիմն ծնած էր 1803—1804 թուին, ուրեմն 1821 թուին նա 16 կամ 17 տարեկան կլինէր, երբ և նա դեռ ևս հայերէն և Ռուսերէն էր սովորում Թիֆլիսի առաջնորդարանում, նոյնպէս հայերէն էր ուտում, խմում և հագնում, նա 1825 թէ 1826 ին ստացաւ դրագրի պաշտօն, երբ և Ներսէսի հետ գնաց Երեւան Պարսից վերջին պատերազմի սկզբում: Պատերազմն վերջացաւ թէ չէ, Ներսիսի հետ 1828 թուին գնաց Բեսարաբիա, ուր կացաւ ց 1830, երբ և լսելով իր հօր հանգուցեալ Վարապետ աղայի մահն, վերադարձաւ Թիֆլիս, և այնուհետեւ նա Ներսիսի երեսն չէ տեսած, մինչև նրա կաթուղիկոսանալն: Ուրեմն նա ծառայել է Ներսիսին 5 կամ 6 տարի վարձով թէ անվարձ, թէ կուզես ասենք անվարձ:

Զարմանք չէ՞ որ Յարութիւն ախպարն իր բնական սովորութեամբ ընդունելու անէ, և թողնելով բուն խնդիրն, առանց որ և իցէ գրաւոր փաստերի, այլ և այլ առարկաներ առաջ բերէ, և յետոյ ասէ թէ «Ներսէսն 1814 թուին՝) Թիֆլիս գալիս Յովակիմին էլ հետն էր բերած»: Դէ՛ էս խօսք է, ասեց, ասեց, և մի և նոյն ժամանակն էլ աւելացնէ թէ, Յովակիմն մէկ կողմից ուսում էր առնում, միւս կողմից Ներսիսին ծառայում էր, այսինքն ձեռնին ջուր էր ածում, երեսը լուանալ էր տալիս, սեղանի վերայ սպասաւորութիւն էր անում, թէյ էր բաշխում, և այլն և այլն: ուրեմն պէտք էր նրա վարձն էն թուիցն հաշուել, ես չեմ ուզում պատասխանել թէ, էն ժամանակն էլ նրա հագուստն, բնակարանը, ուտել խմելն և վարժապետի վարձն եկեղեցական արդիւնքից էին, այլ Պ. Յարութիւնի . . . փայլութեան համար, եթէ եղպէս այսինքն 1814 թուիցն ևս հաշուենք, դարձեալ նրա ասած 25 տարին չէ լրանում, այլ լինումէ 16 տարի: Սորանից ենթադրվումէ որ երջանկայիշատակ Ներսէսն եղպէս անհետն թէ բան չէր գրել, ուրեմն և երեւակայական է և ինքնաստեղծ յօդուածագրի ասածն:

Ահրն տեսանք Վարապետի աննախանձելի վիճակն մինչև Դուռնուկն ստանալն, որ հոգով ընդարձակ, ամայի և աւերակներով լի էր գեղն:

(1) Յօդագրածագիրն չի համարձակուել ասել թէ էն թուից առաջ Յովակիմն դրագրութեան պաշտօն էր կատարում, քանզի այն ժամանակ նա նախ 10 կամ 11 տարեկան կը լինէր, երկրորդ Աշտարակ կամ Էջմիածին Ռուսաց լիզուր վարժատուն չկար, ուր նա էն լիզուրն սովորել էր, եւ հայերենի համար էլ հարկաւոր չէր գրագիր:

Նրա մէջ բնակվումէին միայն երկու եղբայրներ իրանց ընտանիքով, Մախարէ և Եվան անուն: Ի հարկէ նոր գեղատէրը պէտք էր աշխատէր անդ բնակիչներ գաղթեցնել, որպէս զի ժամանակաւ արդիւնք ստանար: Էս ևս զրամով կլինէր, քանզի հարկաւոր էր գաղթողներին սերմնացու, կով, եզն և աւանակներ հայթայթել, և աւերակ տները վերանորոգել: Ապաքէն ո՞վ էր տուել աւելորդ զրամ նորա էն անձուկ՝ ժամանակին, որ էն ամենը լրացնելէն յետոյ, հազար մանէթով էլ օգնել էր զեռ ևս չսկսած ուսումնարանի շինութեանը: Այր և կայայժմ նոյն ուսումնարանի վերայ մտած զրամների տումարն, և հետեապէս նուիրատուների ցուցակն, արդեօք Վարապետի տղւած հազար մանէթն ո՞ր տեղ է գրուած, թող նրա որդի յօգուածագիրը ցոյց տայ: Ո՞հ, եթէ գրիչն կենդանի լիզու է ունեցել, ինչե՞ր կասէր էսպէս անհիմն իրողութիւններ գրողին: Էս խնդրի մտացածին լինելոյ համար մէկ ուրիշ փաստ ևս ասենք:

Սիմէօն Մարկոսովն և Վարապետ աղայն էն ժամանակները վանքի մօտ ընկերութեամբ մէկ կտոր հող գնեցին 800 մանէթով, իրանց համար տուն շինելու: Վարապետի բաժնի 400 մանէթը վճարուած է Թիֆլիսի Նորաշէն եկեղեցւոյ արդիւնքից, որի երեցփոխանն էր յիշեալ հանգուցեալ Սիմէօնը, որ իր ճշմարտախօսութեամբ և բարոյականութեամբը էն ժամանակն երեւելի անձն էր Թիֆլիսում: Հայրս էս վերջնոյն հետ առեւտրական ընկերութիւն ունէր, և երբ նա Բէտուզ—Վալէ վախճանվեց, նրա հոգաբարձուները բաց արին նրա արկղներն և հաշուեմատեանները հանեցին, որպէս զի հօրս հետ հաշիւները վերջացնեն, նրանց զբաղիրն ևս էի, հաշուեմատեանների մէջ երեւցան նրա երեցփոխանութեան այսինքն Նորաշէն եկեղեցւոյ հաշուեմատեաններն: Հոգաբարձուները կամենալով էս հաշիւներն ևս վերջացնել, քրքրեցին և գտան նրանց մէջ գրուած հանգուցելոյն ձեռամբ թէ « Վարապետ աղայի տան տեղի կէս բաժնի մասին հրամանաւ ներսէս առաջնորդի՝ վճարեցի եկեղեցւոյ արդիւնքից 400 մանէթ: » Կենդանի են Մարկոսովի որդիքն, կարող է ոք վերահասու լինել նրանց հանգուցեալ հօրից մնացած հաշուեմատեաններից: Ապաքէն մէկն որ իր բաժնի հողի 400 մանէթն չէր կարողացել վճարել, ո՞ր տեղաց կարող էր փոխ տալ 1000 մանէթ զեռ ևս չսկսված ուսումնարանի շինութեան համար:

Պարսից պատերազմի ժամանակն Ռուսաց զօրքին տուած երկու հազար մանէթի մասին խորագետ յօգուածագիրն վարպետութեամբ չէ յիշում, ո՞ր պատերազմի, 1804 թէ 1808 և կամ 1826 թուերի ժամանակն, որպէս զի եթէ ոք քննէ, նա կարողանայ փոփոխել իր խօսքն, բայց մեք բոլորի համար էստեղ ասենք, Նախ որ Վարապետն իր երիտասարդութեան ժամանակն եղած է Եփրեմ արքեպիսկոպոսի (որ յետոյ կաթողիկոս), յետոյ մեծ Մինասի, և ապա մեծ Բարսեղ արքեպիսկոպոսների մօտ ծառայ, Եթէ ոք էս մասին երկմտի, կարող եմ հանգուցեալ Ներսիսի նաժան հրատարակել: Աւրեմ 1804 և 1808

Թուերին նա չէր կարող երկու հազար մանէթ, որ կանէր 600 թուման Պարսից, փոխ տալ իր եղբորն կամ թէ ուտելիքի փողերն թողնէր նրա վերայ. մանաւանդ որ էն ժամանակն Պարսկաստանի մէջ էսքան գումարի տէրն հարուստ ոք կհամարուէր, և ոչ թէ ծառայութիւն կամ սպասաւորութիւն կանէր: Յօդուածագրի ասածից էս հարցն է ծագում թէ, միթէ՞ ներսէսը մինչև էն աստիճան անխղճմտա՞նք էր, օ՛ն անգր, որ 1804 կամ 1805 թուիցն ց1829, էն երկու հազար մանէթ գումարն իր եղբորը վճարելն զլանումէր, այն ինչ էն պարտքն վերաբերումէր Աթոռին, և ոչ ինքեան: Եթէ այսպիսի մէկ անցք եղած լինէր, անշուշտ ներսէսն ստէպ ստէպ գրած կլինէր Եփրեմ և Յովհաննէս կաթողիկոսներին, կամ Սինօղին և կամ առաջնակարգ միաբաններից մէկին, չասենք թէ իր եղբորն, որպէս զի և ևս սպասէ, իր պարտքն կրվճարէր ժամանակաւ, և ի վերջոյ յօդուածագրի յիշած Վարապետի գրած իսկական նամակին կըպատասխանէր: Բող յօդուածագիրն մէկ էսպիսի գրաւոր ապացուցութիւն հանէ ու իր հակառակորդների և երկմտողների բերանը ցնխէ:

Վարելի է յօդուածագիր պատուելին կանգնէ ասէ թէ, այդ անցքն եղել է Պարսից վերջին պատերազմի ժամանակն, այսինքն 1826 ամին, Թէև էս թուերին վերելք տեսանք Վարապետի տխուր վիճակն, այսու ամենայնիւ մէկ ուրիշ ապացուցութիւն ևս բերենք, որն կաւարելապէս կջրէ նրա ասածը:

Պարսից պատերազմն սկսեց չսկսեց, Ռուսաց թագաւոր կայսեր հրամանով, ներսէսն պարտաւորեցաւ շտապ տագնապով սուրբ Յարութեան ճրագաւոյց օրն, այսինքն շաբաթի օրն կէսօրէն 2 կամ 3 ժամ անցած դուրս գալ Թիֆլիսից, գնալ հասնել էն բանակին, որ արշաւումէր դէպ ի Երևան, Վարապետ աղայն կամենալով նրա հետ ուղևորել, 150 մանէթ չուներ, որ հետը վեր էր առել իր անակնունելի անձնական ծախսերի համար, վասն որոյ 5 թէ 6 օր ուշացաւ, մինչև Դուռնուկի և նրա ջաղացի ապագայ արդիւնքը մէկ քանի ամսով ծախեց մէկ ւլ-է ւլրայ և 150 մանէթ ստացաւ, պայմանաւ որ ինքն ձեռագիր տայ, և նրա վրայ ջրաղացի Մախարէն էլ որպէս երաշխաւոր ստորագրէ, որպէս զի պայմանեալ ժամանակին ժողովէր, բերէր, յանձնէր ալափին: Մախարէն անգրագէտ լինելով, ևս եմ նրա տեղը ստորագրած:

Ահա Վարապետ աղայն էս աննախանձելի վիճակում գնաց Երևան, ապաքէն ուստից էր նրան 2000 մանէթն, որով պաշարեղէն էր տուել Ռուսաց զօրքին, այն ինչ պատերազմը վերջանալէն 5—6 ամիս անցած, հազիւ հազ նա կարողացաւ իր կալուածները կորզել Բօյախչենց Խաչատուրի ձեռքից, որն բացի կալուածների անցեալ արդիւնքն ստանալէն, դարձեալ իր դրամագլխի գումարն էլ էր պահանջում, գրաւոր ապացուցութիւն ներկայացնելով թէ նրանց արդիւնքն չեն ծածկած դրամագլխի անցեալ տոկոսիքն: Ի վերջոյ Իւզրաշի Գաբրիէլ և Աղաբաբ

աղայ Գեղամեաններին և Քեալենց Պետրոսի միջնորդութեամբ վերջանումէ էս վէճն, որպէս զի Խաչատուրն անցեալ տոկոսիքի համար ոչինչ չխօսէ, Կարապետ աղայն նոր մուրհակ տայ նրան 150 թումանի 1/2, տարի ժամանակաւ, և ստանայ իր 200 թումանի մուրհակն ու տիրապետէ իր կալուածքներին: Մուրհակի ժամանակն լրացաւ, Կարապետ աղայն դարձեալ չկարողացաւ 150 թումանը վճարել և մեռաւ, վասն որոյ հայրս գրեց ինձ այդ գումարն վճարել Խաչատուրին, իսկ սա տոկոսիք էր պահանջում ասելով թէ, ստանալիքս իր ժամանակին չստացայ, ուստի և ես գրեցի հօրս, որ պատասխանեց զիմել վերոյիշեալ միջնորդներին, որոնք խնդրեցին և համաձայնացրին Խաչատուրին ու պատմեցին ինձ վերեւը յիշած անցեալ անցքն, որպէս և իրողութիւնն ևս ինքն ցոյց էր տալիս:

Այսու ամենայնիւ յօդուածագիրը փքուելով փրկութիւնը թումէ մէկ ապերախտութեան սնապարծութեան և եսութեան հողմով և կրքով ասելով, « Յովակիմն և Շահազիզեանք երբէք կարօտութիւն չեն ունեցել Ներսիսի օգնութեան, նրանց հանգուցեալ հայրն (իւր հայրն) Կարապետ Շահազիզեանը ունէր իւր սեփական կարողութիւն Աշտարակ գիւղում . . . և ինչ » Մեք արդէն վերն նկարագրեցինք նրա հանգուցեալ հօր տխուր վիճակն. մնաց էս մէկն ևս ասել և հարցնել՝ « եթէ կարօտութիւն չեն ունեցել Ներսիսին » Կարապետ աղայն և Յովակիմն, որ արիւնահեղ պատերազմի մէջ ալատահեցան որ չստացան, պատերազմի ժամանակն ում հացովն էին ապրում, Ս. Էջմիածին և Ղ. Ղ. գեղն ում փողով գնուեցաւ, եթէ Կարապետն և նրա որդիքն կարողութիւն ունէին, ինչի՞ չկարողացան մինչև Ներսիսի կաթուղիէ տանալն յիշեալ Մարկոսովի հետ գնած հողի վրայ տուն շինել, որն ի հարկէ 50 հազար մանէթից աւելի արժեցաւ: Էս գումարն ուստից էր և ի՞նչ աղբիւրից, այն ինչ մինչև Ներսիսի գալն՝ Յովակիմն անպաշտօն և անուճիկ պարապ կը ընթերցէր, և Յարութիւնն էլ նոր ի նորոյ վերադարձած Քիշնեից, մտել էր տէրութեան ծառայութեան մէջ, որ հազիւ թէ 400 — 500 մանէթ ունենար, բայց Գուռուկի արդիւնքովն կապէին կարի չափաւոր կեանք վարելով: Ես ոչ թէ կվկայեմ, այլ կերպուեմ որ էն ամեն զրամներն չեն արտաբերուած Ս. Էջմիածնի դանձարանից, բայց . . . բայց արտաբերուած են Ս. Էջմիածնի դանձարանին հասանելի արդիւնքներից, Քեոփ Յարութիւն, մի՞թէ մոռացել ես որ ստեպ ստեպ կպատմէիր ինձ թէ, ումնից և ի՞նչ հնարքով շաքաթ երեկոյեաններն կամ գիշերներն ի՞նչպէս էիր գջլում և պոկում տան վրայ մսխելոյ փողերն: Ես չեմ ուզում յայտնաբար ասել, լռումեմ նրա համար որպէս զի հանգէս չբերեմ էն անունը, որ ամեն Հայի համար սուրբ է, թէ և քեզ համար ոչինչ արժողութիւն չունի: Ասա խնդրեմ, ի՞նչի ներսիսի վախճանուելու երկրորդ օրը, մինչդեռ հանգուցելոյն մարմինը Թիֆլիսի առաջնորդարանում բազմած էր, Հայերն, Ռուս-

ներն, Վրացիներն, մինչև անգամ մահմեդականներն խուռն բազմութեամբ գալիս էին նրա օծեալ աջն համբուրելոյ, իսկ դուք երկու եղբարքդ . . . վեր քաշած, դատաստանատուները ընկած, տաք տաք աշխատում էիք յիշեալ ձեր նորաշէն տունը գրաւ գնել Պրէկշ ասած դրամանոցումն, Միթէ չէիք վախենում, որ դուք Եջմիածինը նրա համար վէճ բանայ:

Պ. Յարութիւն խնամիս իրան պաշտպանելուց յետոյ, սկսումէ Պ. Սամուէլեանցին ևս հովանաւոր հանդիսանալ, ասելով « աներկբայելի փաստերով յայտնի է, որ Ներսիսի մահուանից յետոյ նրա (Սամուէլեանի) ունեցածն մինչև 1200 մանէթի չէր . . . որին նա (Ներսէս) անուանումէր հայր և մայր . . . »: Որպէս թէ բառգիրքն քրքրել է յօգուածագիրն և բառեր է ընտրել « աներկբայելի փաստերով յայտնի է: » Ապաքէն ինչի՞ արդեօք էն փաստերից գոնէ մէկն առաջ չէ բերում: Բայց էն ժամանակի չար լեզուներն հաւատացնում էին թէ, Սամուէլեանը Ռուսաստանի բանկերի մէջ տոկոսիքով շատ դրամ ունի, Նոյնպէս էն ժամանակն ասումէ նա « Ներսէսն Սամուէլեանի նշանածին ընծայած մատանին, որ 5 մանէթ արժողութիւն ունի . . . » և ինչ, Այսու ամենայնիւ չարածիններն հրատարակեցին թէ, էն մատանին էր, որ Պարսկաստանից Շամիր աղայն ընծայ էր առաքած Ղուկաս կաթուղիկոսին, և որն 4—5 հազար մանէթ արժէր, Եթէ խնամիս ասածն ուղիղ է, ուրեմն Ներսէսն շատ երախտամոռ ոք է եղած, որ Սամուէլեանին հայր և մայր էր անուանում, և եղպէս չնչին բանով էր պարգևատրում: Ա՛խ, ա՛խ, շատ իրողութիւններ կան գրելու, բայց . . . բայց . . . :

Ներսիսին յաջորդեց Մատթէոս կաթուղիկոսն, Սրա ժամանակն ո՛չ թէ Ս. Եջմիածին չեմ եղած, այլ և հետամուտ ևս չեմ եղած նրա վեհարանի մէջ անցկացածներին. թէև նրա կենդանութեան ժամանակն նրա վերայ էլ շատ բամբասանքներ լսած եմ, բայց ևս լսածներս չեմ կարող որպէս փաստեր յիշել, միայն այսքանն է ինձ յայտնի, որ Ս. Եջմիածնի առաջնակարգ միաբանութեան ստորագրութեամբ 125 յօդուածից բաղկացած մէկ բողոքագիր ստացայ 1865 ամին, որի ներքէն գրուած էր թէ, « սորա պատճէնների երկուսն էլ առաքած ենք Նոյնի գերազանցութեան Ստեփան Պաւլովիչ Ղամբարովին և Երեմիա Եգորիչ Արծրունուն . . . »

.

Ահրջ ի վերջոյ էս ևս աւելացնենք թէ, Հայերս ե՞րբ մեր ընտրած կաթուղիկոսներին չզրպարտեցինք և չբամբասեցինք, ի հարկէ ըստ մեծի մասին նրա համար, որ չարաչար խնդիրներ և պահանջմունքներ ենք առաջարկում նրանց, և նոքա ապօրինաւոր գտնելով մեր առաջարկութիւններն, չեն կատարում, այնուհետև մեք ևս վրէժխնդրութեան և

քինախնդրութեան հոտած կրքով սկսում ենք սուտ ու մոտ զրպարտութիւններ և բարուրանքներ հնարել և նոցա վերայ հրատարակել: Հայերս չենք կարող հանդուրժել Հայ գլխաւորի, որի 99 կատարած բարի և ազգօգուտ գործերը կմոռանանք, և նրա մէկ փոշետեսակ կամ ընդդէմ իր կամաց և սխալուած գործը հազար ու մէկ դարձուածներով կըմեկնենք և անդուսպ բերանով և անամօթութեամբ կհրատարակենք:

ԳԱԼՈՒՍ ՇԻՐՄԱՋԱՆԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՀՈՒՀՈՒՑ Պ. Ս. Տ. Դաւթեանցը մեզ գրում է. « Սեպտեմբերի 25 ին երեկոյեան ժամին փառաւոր հանդիսով կատարուեցաւ Վեհափառ Հայրապետի տօնը: Նշանակեալ ժամին տեղւոյս երկսեռ ուսումնարանաց աշակերտները և աշակերտուհիները խուռն բազմութեամբ դիմեցին Ագուլեաց աւագ եկեղեցին, ուր սպասում էին եկեղեցւոյ պաշտօնեաները և արժանապատիւ հայր Արապետ Վ. Այվազեանը: Երեկոյեան ժամերգութիւնը կատարելուց յետոյ հանդէսը սկիզբն առաւ ճառով, որը կարգաց տղայոց ուսումնարանի կողմից մի աշակերտ, ուր համառօտ կերպով ամփոփուած էր Վաթուղիկոսի գործերը: Ճառը վերջանալուց յետոյ ուսումնարանի տղայքը միաբերան երգեցին « Հնչեսցեն լարք » ազգային երգը: Առաջին երգից յետոյ համօրէն աշակերտուհիների կողմից մի օրիորդ կարգաց ճառ, որոյ բովանդակութիւնն էր հոգեւորական դասի նշանակութիւնը: Հայոց մէջ, Վեհափառ Վաթուղիկոսի արժանաւոր գործունէութիւնները ներկայ դարուս մէջ և վերջը մի խորհրդածութիւն դէպի ուսումնարանի օրիորդները: Անմիջապէս օրիորդաց ճառին հետեւեց « Ով տէր Աստուած » երգը, որը երգեցին քաղցր և ներդաշնակ կերպով նոյն իսկ օրիորդները: Հայր կարապետ Վ. Այվազեանը հանդիսին վերջ տուաւ մի աղու և իմաստալից ճառով: Ետեւ մի առ մի մէջ բերեց Վեհափառ Վաթուղիկոսի անթիւ անհամար բարեգործութիւնները, նորա բարի ձգտումները և ազգային լուսաւորութեան վերայ ունեցած ճիգը: Հայր Այվազեանի ճառախօսութիւնը մեծ տպաւորութիւններ արաւ բոլորի վերայ և առհասարակ տմենքը ևս յուզուած՝ դուրս գնացին եկեղեցուց անջնջելի կերպով դրոշմելով իրենց սրտերի մէջ մեր մեծ Հայրապետի անունը:

Այս քանի ժամանակներումն մեռան մի քանի անձինք, որոնք նուիրեցին ուսումնարանին բաւական մեծ գումար շնորհիւ Արժ. Այվազեանի: